ՀԱՆԳԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՔԱՀԱՆԱ ՔԱՂՔԵՋՅԱՆԻ (1940—1987)

Ս/թ. նոյեմբերի 9-ին, ժամը 14.30-ին, ի Տեր հանգչավ Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Համբարձում քահանա Քաղքեջյանը:

Նոյեմբերի 8-ին, կիրակի օրը, Գյուտ Խաչի տոնին, Տեր Համբարձումը իր վերջին սուրբ պատարագն է մատուցում Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու խորանի վրա և քարոզում օրվա սուրբ տոնի առթիվ՝ ավետարանական պատգամը տալով իր հոգևոր հոտին:

Նոյեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, Տեր Համբարձումը կատարում է առավոտյան ժամերգություն:

Նույն օրը, հետ ճաշու, եկեղեցում, աթոռին նստած, Ս. Գիրքը ձեռքին, ժամը 14.30-ին սրտի կաթվածից վախճանվում է Տեր Համբարձումը 47 տարեկան երիտասարդ հասակում:

Նոյեմբերի 10-ին, Ս. Էջմիածին եկեղեցում վերջին «Հոգվոցն» արտասանվելուց հետո, հանգուցյալի հարազատները հանգուցյալի դին տեղափոխում են Մայր Հայրենիք, Էջմիածին:

Տ. Համբարձում քհն. Քաղքեջյանը ծնվել է Երուսաղեմում 1940 թվականի մայիս ամսին: 1947 թվականին ընտանիքով հայրենադարձվել են Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Էջմիածին քաղաքում:

1947—1958 թթ. սովորել է Էջմիածնի № 2 միջնակարգ դպրոցում: 1958-ին դպրոցն ավարտելուց հետո, աշխատանքի է անցել կապի հանգույցում:

1964—1967 թթ. սովորել և ավարտել է Երևանի կապի տեխնիկումի փոստային բաժինը:

1968—1972 թթ. աշխատել է Երևանի № 48 կապի բաժանմունքում, որպես փոստի վարիչ:



1972—1983 թթ. աշխատել է Ս. Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում՝ միաժամանակ հետևելով ծիսական արարողություններին:

1983 թվականին սովորել և ավարտել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայական դասընթացը և նույն տարվա հունիս ամսին, քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

1983—1985 թթ. ծառայել է Ռոստովի շրջանի Զալտր գյուղի Սուրբ Համբարձում եկեղեցում:

1985-ից 1987 թվականի հունվար ամիսը ծառայել է Օրջոնիկիձեի հայոց եկեղեցում:

1987 թվականի ապրիլ ամսից Տ. Համբարձում քահանա Քաղքեջյանը նշանակվել է հոգևոր հովիվ Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցում:

Տ. Համբարձում քահանա Քաղքեջյանը իր հոգևոր ծառայության ընթացքում արժանացել է Թբիլիսիի հայոց հավատացյալ հոտի, եկեղեցական վարչության և հոգևոր առաջնորդի բարձր գնահատանքին:

Ոչ ևս է Տեր Համբարձումը, բայց կա և կմնա նրա թողած աղոթանվեր շունչն ու քաղցր հիշատակը Թբիլիսիի հայության սրտում:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ